**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»**
**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

ի պատասխան Ձեր 05.03.2024թ. հ. 5/03 գրության՝ տեղեկացվում է.

Նոր Նորք վարչական շրջան, Լվովյան փողոց հ.2/1 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման համար Երևան համայնքի կողմից կառուցապատող՝ «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊ ընկերությանը, 24.08.2022թ. Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է հ.01/18-07/1-Դ-32075-747 նախագծման թույլտվությունը: Այնուհետև, նշված նախագծման թույլտվության հիման վրա մշակված նախագիծը մինչ համաձայնեցման ներկայացվելը՝ ՀՀ գործող օրենսդրության պահանջների համաձայն ենթարկվել է նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համապատասխանությանը հավաստող փորձաքննությունների ստանալով՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 2-ի հ.49-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի հ.159 պետական համալիր փորձաքննական հանձնաժողովի հ.95 (պետական համալիր փորձաքննություն), «Գրանդ քոնթրոլ» ՍՊ ընկերություն (լիցենզիա ՔՊԼ 17849) 19.04.2023թ. հ.09-2023 փորձագիտական դրական, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 04.04.2023թ. հ._ՔՏՄ/09.2.2/7261-23, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 27.12.2023թ. հ.1.4/9.1/846-2023 եզրակացությունները:

Հիմք ընդունելով վերը նշված փորձաքննական եզրակացությունները՝ 15.08.2023թ. Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցվել է հ.01/18-05/1-Դ-68621-745 նախագիծը և տրամադրվել հ. 01/18-Դ-68621-1616 շինարարության թույլտվությունը:

Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինական փաստաթղթեր մշակող ստորաբաժանումների կողմից աշխատանքային նախագծերի, նորմատիվային պահանջներին համապատասխանության ստուգում չի իրականացվում, փոխարենը՝ հիմք է ընդունվում ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշմամբ ամրագրված, անհրաժեշտ՝ իրավասու մարմինների կողմից տրված փորձաքննությունների դրական եզրակացությունները, որոնք կեղծ կամ ոչ իրավաչափ ճանաչված չեն և չեն կարող դրվել կասկածի տակ հաշվի առնելով, որ տրվել են համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից:

Միաժամանակ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակիցների կողմից կատարված տեղատեսության արդյունքում պարզվել է, որ Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոց հ.2/1 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման համար առկա է Երևան հայայնքի կողմից 2023 թվականի օգոստոսի 15-ին տրված հ.01/18-Դ-68621-1616 շինարարության թույլտվությունը (այսուհետ՝ Կառուցապատման թույլտվություն): Կառուցապատման թույլտվության համաձայն իրականացվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում չեն պահպանվել Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված հավելվածի լրացուցիչ պահանջները, մասնավորապես՝ տեղադրված չէր տեղեկատվական ցուցանակը, որի համար կառուցապատող «Էկո բիլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կառլեն Մինասյանի նկատմամբ, 2024 թվականի մարտի 19-ին Նոր Նորք վարչական շրջանի կողմից, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 157.15 հոդվածի 3-րդ մասի համաձայն կազմվել է հ.004766 արձանագրությունը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**